

Ժամանակակիցները կը պատմեն, ի միջի այլոց, թէ Տարգմեն, մեծանուն ոռու վիպասանը, որ ազատական մըն էր եւ գրեթէ միշտ կ'ալարէր Պարիզի մէջ, այդ պատմական օրերուն նոյնպէս հեւ ի հեւ կը հետեւէր Լօրիսի շարժումներուն եւ օր մը կէս լուրջ, կէս-կատակ բացականչեր է իր ոռու բարեկամներու շրջանում .

— «Աֆէրի՛մ Լօրիս Մէլիքով . իրաւ կ'ըսեն հայերը . մէկ Թիֆլիս — մէկ Լօրիս» . . .

Չենք ծանրանար զիբոսատորի գործունէութեան մանրամասները վրայ : Ըսենք միայն, որ ան յուսահատ ճիգեր ըրաւ՝ դէթ փոքրը ինչ մեղմելու միահեծան բռնապետութեան սեփմը, գէթ իրագործելու սահմանադրութեան ամենահամեստ ծրագիր մը :

Սակայն, յեղափոխականներու զինադադար եւ Լօրիսի առաջ բերած յարարերական անդորրութիւնը վերստին քաջալերեցին ցարի ուղղափառ խորհրդականները, որոնք չէին ուզեր սեւէ սեֆօրմ եւ կը ձգտէին չէզոքացնել վտանգաւոր հայր . . .

Սահմանադրութեան խնդիրը կը ձգձգուէր շարունակ : Ի վերջոյ յեղափոխականները որոշեցին վերսկսիլ ահաբեկումները եւ ուղղեցին իրենց հարուածը կայսեր դէմ : 1881-ի մարտ 1-ին, կիրակի օր մը, Ալէքսանտր II կառքով ու շքախումբով կ'երթայ եկեղեցի, — հակառակ Լօրիսի յորդորներուն, որը իբր թէ տեղեակ էր գաւազրութեան եւ կը խնդրէր թաղաւորին դուրս չելնել պալատէն : Կ'ըսուի նաեւ, թէ Լօրիսեան Սահմանադրութեան նախադիժը (որու գոյութիւնը անվիճելի իրողութիւն մըն է) այդ օրն իսկ արքայական հրովարտակով պէտք է հրատարակուէր . բայց իր կարճատեւ պառլամի միջոցին ցարը կ'ընկնի ոռմբերու տարախին տակ եւ կը սպաննուի . . .

Այդէտ մը՝ Ռուսաստանի համար : Ահաւոր աղէտ մը եւ հայութեան համար (թէ կովկասեան եւ թէ օսմանեան) : Ոչ մի տարակոյս, եթէ այն ժամանակէն արդէն Ռուսաստանը կամաց-կամաց վերանորոգուէր Լօրիս-Մէլիքովի եւ իր ոռու գաղափարակիցներու գծած ուղղութեամբ, եթէ 80-ական թուականներէն արդէն հսկայ կայսրութիւնը մտնէր հեղաշեփարեմտեան սահմանադրական էւոլիւսնիոնի

ճամբուն մէջ եւ այդպիսով խուսափէր բացարձակ բռնապետութեան այն յարահուն մըղձաւանջէն, որ իշխեց Լօրիսէն յետոյ ամբողջ տասնեակ տարիներ, — ոռու ժողովուրդը եւ անոր հետ կայսրութեան բոլոր ժողովուրդները պիտի ազատ մնային յետագային նաեւ բոլշեւիզմի մղձաւանջէն . . .

«Այատամիտ կայսեր» սպանութենէն յետոյ, սկսուեցաւ մօռայլ սէպտեմբրի շրջան մը՝ դահակալութեամբ Ալէքսանտր III-ի, աւելի ճիշդ՝ Պօրեդօնոսցելի, որ նոր ցարի ամենակարող դաստիարակն էր եւ մարդկային պատմութեան ամենազափան բռնաւորներէն մէկը :

Լօրիս-Մէլիքով ոռու փոքրաթիւ համախոհներով ստիպուեցաւ ձգել Ռուսաստանը եւ աքսորի ճամբան բռնել : Հաստատուեցաւ նախ Գերմանիայում, ապա անցաւ Ֆրանսայի հարաւը, ապրեց քանի մը տարի, եւ մեռաւ հոս, Նիցցայի մէջ (Նիս), ուր գրեցի այս տողերը :

\* \* \*

Ահա թէ ինչ կը գրէր տեղական թերթերէն մէկը, Le Petit Nicols, Կոմսի մահուան ու յուղարկուելու թեմի (1888 թ. դեկտ. 27 եւ 28 թիւերու մէջ) .

«Գեկտեմբեր 23-ին ժամը 10-ին երեկոյեան Place Grimaldi-ի իր բնակարանին մէջ մեռաւ կոմս Լօրիս-Մէլիքով, . . . համբաւաւոր ոռու զօրավարը, Կարսի հերոսը վերջին ոռութիւրք պատերազմին : Լուրը խորապէս ցնցեց Նիցցայի ոռու գաղութը, որ ճշմարիտ պաշտամունք մ'ունէր այդ մեծ զինուորին համար :

Ֆրանսական կառավարութիւնը հրահանգեր է, որ զինուորական ամենամեծ պատիւները տրուին հանգուցեալին» :

Ապա լրագիրը երկարօրէն կը նկարագրէ թափօրը, որ Ֆրանս . իշխանութիւններու եւ զօրքերու մասնակցութեամբ կ'ուղղուի հռչակաւոր Promenade des Anglais-ով դէպի Կօկադի գերեզմանատուն, դէպի ժամանակաւոր հանգստարան, ուրկէ յետագային մարմինը պիտի փոխադրուէր Թիֆլիս, թաղուելու համար հայոց մայր-եկեղեցու գաւթում, զօր . Տէր Ղուկասովի, Շելիօվնիկովի, Լազարէվի եւ այլոց շարքին :